ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սույն թվականի մայիսի 23-ին, Ռուս Եկեղեցու հազարամյակի տոնակատարությունների նախօրեին, Մոսկվայում տեղի ունեցավ Սովետական Միության Եկեղեցիների և կրոնական հարանվանությունների պետերի հավաք:

Այս հավաքին, հանուն Հայ Առաքելական Եկեղեցու, իր բարձր մասնակցությունը բերեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությանը ուղեկցում էր Աղըրբեջանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը:

Վեհափառ Հայրապետը Մոսկվա ժամանեց մայիսի 22-ին:

Մայիսի 23-ին Զագորսկի Սերգիևյան Երրորդության վանքում տեղի ունեցավ հավաքի պաշտոնական բացումը:

Նորին Սրբազնություն Պիմեն Պատրիարքը ողջունեց հավաքի մասնակիցներին և շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին և Վրաց Իլիա Բ կաթողիկոսին՝ այս հավաքը հրավիրելու մտահղացման համար: Սրբազան Պատրիարքը շեշտեց այն միտքը, որ մեր երկրում բոլոր ժողովուրդները ունեն միասնական պատմական ճակատագիր և միևնույն քաղաքական գիտակցությունը՝ անկախ նրանց կրոնական տարբերություններից: Սրբազան Պատրիարքը ներկաներին պատմեց նաև Մ. Ս. Գորբաչովի հետ ունեցած հանդիպման մասին, որով նոր հեռանկարներ են բացվում Եկեղեցու գործունեության համար:

Ապա ողջույնի խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը նախ ողջունեց Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հազարամյակը: Նշեց, որ մոտ 10 օր առաջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարվեց Ռուս Եկեղեցու հազարամյակին նվիրված գիտական նստաշրջան, որին մասնակցեցին նաև Ռուս և Վրաց Եկեղեցիների ներկայացուցիչները: Կարդացվեցին տասնյակ զեկուցումներ, մանավանդ հայ և ռուս ժողովուրդների ու Եկեղեցիների դարավոր հարաբերությունների մասին: Նորին Սրբությունը հատկապես ընդգծեց վերակառուցման պայմաններում գործունեության նոր հորիզոնների բացման մասին և հաստատեց, որ Եկեղեցին և հավատացյալները պետք է գործոն մասնակցություն բերեն մեր երկրի վերակառուցման և դեմոկրատացման գործընթացին: Նորին Սրբությունը անդրադարձավ նաև մայիսի վերջին Մոսկվայում կայանալիք Սովետա-Ամերիկյան գագաթի հանդիպմանը՝ որպես կարևորագույն պատմական իրադեպ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ Է ՍՍՀՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿՈՉԸ
(23 ՄԱՅԻՍ, 1988 Թ.)

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ ՋԱԳՈՐՍԿԻ ՍԵՐԳԻԵՎՅԱՆ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՎԱՆՔՈՒՄ (23 ՄԱՅԻՍ, 1988 Թ.)

Նորին Սուրբ Օծության խոսքից հետո հանդես եկան տարբեր Եկեղեցիների ու կրոնների ներկայացուցիչներ:

Ժողովը հատուկ կոչ ընդունեց՝ ուղղված ՄԱԿ-ի երրորդ նստաշրջանին և պետությունների ներկայացուցիչներին:

Հաջորդ օրը Վեհափառ Հայրապետը այցելեց Ս. Դանիելյան վանք՝ Ռուս Եկեղեցու ներկա կենտրոնը՝ դրտելու համար նորակառույց Վեհարանն ու վերականգնված վանքի բակը, ուր տեղադրված է 13-րդ դարի հայկական գեղեցիկ մի խաչքար, որպես նվեր Հայ Եկեղեցուց Ռուս Պրավոսլավ քույր Եկեղեցուն՝ նրա հազարամյակի առթիվ:

Վեհափառ Հայրապետը իր ողջույնի խոսքում ասաց.

«Աստուծո ողորմությամբ հոգեկան մխիթարություն ունեցանք այցի գալու Դանիելյան պատմական վանք, որ մեր օրերին վերակառուցվեց և բարեզարդվեց աչքանշելի կերպով՝ օրհնությամբը Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի և նվիրյալ ջանքերով Տիխոն վարդապետին:

Թող Տերը հավետ անշարժ ու ծաղկյալ պահի այս սրբատեղին ի միխիթարություն ռուս հավատավոր ժողովրդին»:

Մայիսի 25-ին Նորին Ս. Օծությունը վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ԹՂԹԱԿԻՑ